

Կենտրոնամետ ընտրողի մոդելը

Առևտրային քաղաքականությունը սովորաբար դիտարկվում է *նորմատիվ* տեսանկյունից: Այսինքն՝ հասարակության առավելագույն բարեկեցության համար ինչպիսիք քաղաքականություն է անհրաժեշտ կիրառել: Սակայն՝ առևտրային քաղաքականությունը կարելի է դիտարկել նաև *պոզիտիվ* տեսանկյունից: Այսինքն՝ ինչո՞ւ են երկրները կիրառում հատկապես այս կամ այն առևտրային քաղաքականությունը:

Հաշվի առնելով, թե առևտրային քաղաքականության նորմատիվ տեսությունը ինչ է խորհուրդ տալիս կիրառել, բայց փաստացի երկրները ինչ քաղաքականություն են կիրառում, կարելի է կարծել, թե որոշում կայացնողները պարզապես տեղյակ չեն, թե որն է արդյունավետ քաղաքականությունը, կամ թե ինչ աղճատումներ են ի հայտ գալիս փաստացի կիրառվող քաղաքականությունների պատճառով: Մասնավորապես՝ տեսությունը, որպես կանոն, փաստում է, որ մաքսադրույքների ու առևտրային այլ սահմանափակումների կիրառումը օպտիմալ չէ: Բայց երկրները, որպես կանոն, փաստացի կիրառում են առևտրային սահմանափակումներ: Մի՞թե որոշում ընդունողները տեղյակ չեն:

Հանրային ընտրության տնտեսագիտությունը ուսումնասիրում է կառավարության՝ որոշումների ընդունման վարքը տնտեսական մոդելների կիրառմամբ: Այսինքն՝ հանրային հատվածում որոշում ընդունողները համարվում են օգտակարությունը մաքսիմիզացնողներ, որոնք առկա սահմանափակումների պայմաններում ձգտում են օպտիմալ որոշման՝ ճիշտ այնպես, ինչպես մասնավոր հատվածում որոշում ընդունողները: Այսինքն՝ այնպես, ինչպես տնային տնտեսությունը, որը եկամտի, ժամանակի և այլ սահմանափակումների պայմաններում ձգտում է առավելագույն օգտակարության, կամ ձեռնարկությունը, որը ռեսուրսների, տեխնոլոգիայի և այլ սահմանափակումների պայմաններում ձգտում է առավելագույն եկամտի:


Իսկ ի՞նչ սահմանափակումներ է հաշվի առնում հանրային հատվածում որոշում ընդունողը: Այդպիսիք կարող են լինել բազմաթիվ. անձնական արժեքները, երկրի շահը, քաղաքական գաղափարախոսությունը, անձնական բարեկեցությունը (որ ձեռք է բերվում կաշառքի միջոցով), որոշում ընդունողի տեղը պատմությունում և այլն: Պարզության համար, սակայն, կենթադրենք, պաշտոնյայի միակ նպատակը վերընտրվելն է, և նա գործում է այնպես, որ մաքսիմիզացնի վերընտրվելու հավանականությունը:

Իսկ եթե պաշտոնյան գործում է՝ նպատակ ունենալով վերընտրվել, ապա կարելի է եզրակացնել, որ հասարակության ցանկությունները առավելագույն կերպով ի կատար կածվեն: Բայց մի՞թե դա այդպես է:

Մոդելի նկարագիրը

Եթե որոշում կայացնողը ցանկանում է վերընտրվել, ապա նրա որոշումը պետք է համապատասխանի կենտրոնամետ ընտրողի ցանկությանը: Այսինքն, եթե ընտրողներին դասավորենք ըստ նախապատվությունների, ապա որոշումը պետք է համապատասխանի կենտրոնում գտնվող ընտրողի նախապատվությանը, քանի որ դրա օգտին հանդես է գալիս ընտրողների մեծամասնությունը:

Գրաֆիկ 3-1:
Կենտրոնակողմ ընտրողի
նախապատվությունը



Կենտրոնամետ ընտրողի մոդելի միջոցով կարելի է դիտարկել տարաբնույթ որոշումների կայացման մեխանիզմը, այդ թվում՝ առևտրային քաղաքականության: Ստուլպեր–Մամուլսոն թեորեմը և Մասնագիտացած ռեսուրսի մոդելը վկայում են, որ առևտրային քաղաքականությունը, որի արդյունքում փոխվում են ապրանքների հարաբերական գները, հստակ ազդեցություն է ունենում տնտեսությունում եկամուտների բաշխման վրա: Մասնավորապես՝ Ստուլպեր–Մամուլսոն թեորեմը ցույց է տալիս, որ մաքսատուրքը, որի արդյունքում բարձրանում է աշխատատար ներմուծվող ապրանքի գինը, մեծացնում է աշխատուժի իրական եկամուտը և նվազեցնում է կապիտալի իրական եկամուտը՝ անկախ նրանից, թե որ ճյուղում են այդ ռեսուրսները զբաղված (քանի որ ռեսուրսները կատարյալ շարժուն են ճյուղերի միջև):

Ենթադրենք՝ քննարկվում է ներմուծվող ապրանքի նկատմամբ մաքսատուրք սահմանելու հարցը: Բոլոր ընտրողները դասավորված են հորիզոնական ճառագայթի 0-ից 1 հատվածում՝ ըստ իրենց նախապատվության (Գրաֆիկ 3-1): Մասնավորապես՝ նրանք, ովքեր կվնասվեն մաքսատուրքի սահմանումից, դասավորված են սկզբում, ովքեր կշահեն՝ վերջում: Կենտրոնամետ ընտրողը գտնվում է բաշխման 0.5 կետում: Մեր օրինակում ընտրողների 60%-ը մաքսատուրքի սահմանման դեպքում կվնասվի:


Գրաֆիկ 3-1-ում պարզության համար ենթադրվում է, թե բոլոր նրանք, ովքեր շահում են, շահում են մեկ անձի հաշվով O չափով, իսկ բոլոր նրանք, ովքեր տուժում են, տուժում են մեկ անձի հաշվով V չափով: Ընդհանուր դեպքում ընտրողների նախապատվությունը կարելի է ներկայացնել վերընթաց կորի միջոցով՝ առավել շատ վնասվողից մինչև առավել շատ շահողը: Սակայն, նման ընդհանրացումը որևէ կերպ մոդելի եզրահանգումները չի փոխում: Բացի այդ, այն որ օգտվողները շահում են հաստատուն O , իսկ վնասվողները տուժում են հաստատուն V , համահունչ է այն ենթադրությանը, որ ռեսուրսները միատարր են և ունեն միանման ու միասեռ նախապատվություններ¹:

Մեր օրինակում, քանի որ կենտրոնամետ ընտրողը վնասվում է մաքսատուրքի առաջարկվող փոփոխությունից, ապա նա, հավանաբար, դեմ է այդ փոփոխությանը և, հետևաբար, որոշում կայացնողը, որը շահագրգռված է վերընտրությամբ, մաքսատուրքին դեմ կքվեարկի:

Այսպիսով՝ առևտրային քաղաքականությունը, անկախ նրանից ազատական է (մաքսատուրքերը նվազեցնող), թե պաշտպանական (մաքսատուրքերը բարձրացնող) միշտ

¹ Ռեսուրսների միատարրությունը առևտրի տեսության ստանդարտ ենթադրություններից է: Իսկ նախապատվությունների միանմանությունը և միասեռությունը հասարակության անտարբերության կորերի կառուցման պարտադիր նախապայման է:

Գրաֆիկ 3-2:
Նախապատվությունների
ինտեսիվության տարբերությունը



բերում է հասարակությունում եկամուտների վերաբաշխմանը: Ումանք շահում են, ումանք՝ տուժում: Ըստ կենտրոնամետ ընտրողի մոդելի, առևտրային քաղաքականությունը կիրականացվի ըստ մեծամասնության ցանկության, ինչը, կարծես թե, դրական է:

Մոդելի քննադատությունը

Նույնիսկ, երբ որոշումը կայացվում է ըստ մեծամասնության ցանկության, այն կարող է լինել ենթասոպտիմալ՝ պայմանավորված անհատական նախապատվությունները ագրեգացնելու և դրանց հիման վրա քաղաքական որոշում կայացնելու պրոբլեմներով:

Նախ՝ կենտրոնամետ ընտրողի մոդելը հաշվի չի առնում նախապատվությունների ինտեսիվությունը:

Ենթադրենք՝ քննարկվում է ներմուծման մաքսատուրքը հանելու հարցը: Դարձյալ 60%-ը կվնասվի, իսկ 40%-ը կշահի, եթե առևտուրը ազատականացվի (Գրաֆիկ 3-2): Սակայն, այս դեպքում միավոր վնասը էապես փոքր է միավոր օգուտից: Մեր օրինակում $0.4v > 0.6O$, հետևաբար ազատականացման *զուտ* ազդեցությունը հասարակության համար դրական է: Բայց, քանի որ կենտրոնամետ ընտրողը վնասվում է, ապա, ըստ մոդելի, առևտուրը չի ազատականացվի:

Գիտենք, որ այլ աղճատումների բացակայության դեպքում, ներմուծման սահմանափակումը հասարակության բարեկեցությունը նվազեցնում է: Ըստ Ստոլպեր–Սամուելսոն և Հեկշեր–Օհլին թեորեմների, մաքսատուրքը, որի հետևանքով ներմուծվող ապրանքի գինը բարձրանում է, բարձրացնում է հազվագյուտ ռեսուրսի իրական վարձատրությունը և նվազեցնում է առատ ռեսուրսի իրական վարձատրությունը: Կենտրոնամետ ընտրողի մոդելի տեսանկյունից, էական չէ՝ մաքսատուրքը դրական, թե բացասական է ազդում բարեկեցության վրա (պարզել ենք, որ բացասական), էական է, որ ռեսուրսը ավելի շատ ձայն ունի քաղաքական պրոցեսի վրա ազդելու համար: Ռեսուրսների բաշխումը որպես կանոն համաչափ չէ՝ հասարակության յուրաքանչյուր անդամ ունի մեկ միավոր աշխատուժ, ումանք ունեն շատ կապիտալ, իսկ շատերը ոչ մի միավոր կապիտալ: Հետևաբար, եթե որոշումը կայացվում է ըստ կենտրոնամետ ընտրողի նախապատվության, ապա աշխատուժի շահերը միշտ կգերակայեն:

Այսինքն, նույնիսկ, եթե աշխատուժը տնտեսական տեսանկյունից հազվագյուտ է, միևնույն է, այն քաղաքական տեսանկյունից առատ ռեսուրս է, այսինքն՝ մեծամասնություն է կազմում:

Եթե երկրում աշխատուժը տնտեսական տեսանկյունից հազվագյուտ ռեսուրս է, ապա երկիրը կներմուծի ապրանքներ, որոնց արտադրությունում ինտենսիվ կիրառվում է աշխատուժ: Իսկ աշխատատար ապրանքների գնի բարձրացումը շահեկան է աշխատուժին: Հետևաբար՝ երկրներում, որոնցում աշխատուժը հազվագյուտ ռեսուրս է, մաքսատուրքը միջին հաշվով բարձր կլինի այն երկրների համեմատ, որոնցում աշխատուժը առատ ռեսուրս է:

Դիտարկված երկու տարբերակներում էլ հասարակության մի մասը շահում է մեկ այլ մասի հաշվին: Բարեկեցության տնտեսագիտության *Պարետո չափանիշով* դիտարկված քաղաքականություններից ոչ մեկը *օպտիմալ չէ*, քանի որ միայն ոմանց վնասվելու արդյունքում ոմանք շահում են: Սակայն, խնդիրը կարելի է դիտարկել նաև *փոխհատուցման չափանիշով*: Ըստ այս մոտեցման, քաղաքականությունը հասարակության համար խելամիտ է, եթե նրանք, ովքեր շահում են, կարող են ամբողջապես փոխհատուցել նրանց, ովքեր տուժում են: Նկատենք, որ Գրաֆիկ 3-1-ում մաքսատուրքի բարձրացումը խելամիտ չէ (և այն, իսկապես, չի ընդունվում), իսկ Գրաֆիկ 3-2-ում առևտրի ազատականացումը խելամիտ է (թեպետ, այն մերժվում է):

Իրավիճակը փոխվում է, երբ ընտրողները կարող են *գնել* ձայն: Գրաֆիկ 3-2-ում փոքրամասնության շահագրգռվածությունը *վճարել* առևտրի ազատականացման համար ավելին է, քան մեծամասնության շահագրգռվածությունը պահպանել ստատուս-քվոն: Թեպետ վճարման մեխանիզմները անօրինական են, իսկ ոմանց կարծիքով, նաև անբարոյական, բայց գործնականում առկա են բոլոր քաղաքական համակարգերում: Հատկապես, դրանք լայնորեն տարածված են ԱՄՆ-ում, ուր դրանք կոչվում են *logrolling*: Լոգռոլինգի միջոցով կողմերը պայմանավորվում են, որ մի կողմը քվեարկի այն օրենքի օգտին, որը պաշտպանում է մյուս կողմը, և, որպես փոխհատուցում, մյուս կողմը հետագայում կքվեարկի այն օրենքի օգտին, որը կպաշտպանի առաջին կողմը:

Աղյուսակ 3-1: Օգուտ լոգռոլինգի արդյունքում (անհատի օգուտը կամ վնասը)

	Ա	Բ	Գ	Զուտ
Խնդիր 1	+30	-5	-5	+20
Խնդիր 2	-5	+30	-5	+20
Խնդիր 1 և 2	+25	+25	-10	+40

Աղյուսակ 3-1-ում ներկայացված է Խնդիր 1-ի և Խնդիր 2-ի ընդունման դեպքում Ա, Բ և Գ անձանց օգուտը կամ վնասը: Մասնավորապես՝ Խնդիր 2-ի ընդունման դեպքում Ա և Գ անձիք վնասվում են 5 միավոր, իսկ Բ անձը օգտվում է 30 միավոր: Նկատենք, որ և՛ Խնդիր 1-ի, և՛ Խնդիր 2-ի դեպքում հասարակությունը զուտ հաշվով շահում է, երկու դեպքում էլ *զուտ օգուտը* կազմում է 20 միավոր: Սակայն, և՛ Խնդիր 1-ը, և՛ Խնդիր 2-ը՝ 2 դեմ, 1 կողմ ձայներով չեն ընդունվի: Մասնավորապես՝ Խնդիր 2-ի դեպքում Ա-ն և Բ-ն դեմ կքվեարկեն: Բայց, եթե Ա-ն և Բ-ն միավորվեն ու Խնդիր 1-ը և Խնդիր 2-ը քվեարկվեն փաթեթով, ապա 2 կողմ, 1 դեմ ձայներով փաթեթը կանցնի: Հասարակության զուտ օգուտը կկազմի 40 միավոր:

Դիտարկված օրինակը բավարարում է փոխհատուցման չափանիշին և լոգռոլինգի միջոցով շահեցին ոչ միայն Ա-ն ու Բ-ն, այլև շահեց հասարակությունը: Բայց, լոգռոլինգը կարող է բերել նաև ոչ օպտիմալ լուծումների:

Աղյուսակ 3-2-ում և՛ Խնդիր 1-ի, և՛ Խնդիր 2-ի դեպքում հասարակությունը զուտ հաշվով վնասվում է, բայց լոգոտլինգի միջոցով Ա-ն ու Բ-ն կարող են միավորվել ու անցկացնել օրենսդրական փաթեթ, որը նրանցից յուրաքանչյուրին շահեկան է, բայց վնասակար է հասարակության համար:

Աղյուսակ 3-2: Վնաս լոգոտլինգի արդյունքում (անհատի օգուտը կամ վնասը)

	Ա	Բ	Գ	Զուտ
Խնդիր 1	+30	-20	-20	-10
Խնդիր 2	-20	+30	-20	-10
Խնդիր 1 և 2	+10	+10	-40	-20

Լոգոտլինգի դասական օրինակ է 1930թ-ին ԱՄՆ-ի կոնգրեսի ընդունած Սմութ-Հովլի օրինագիծը, երբ տնտեսության տարբեր ճյուղերում մաքսադրույքների շեշտակի բարձրացման առաջարկները միավորվեցին մեկ փաթեթում: Օրենսդիրները, որոնցից յուրաքանչյուրի նպատակը իր համար քաղաքականապես կարևոր ճյուղում մաքսադրույքի բարձրացումն էր, քվերակեցին այլ ճյուղերում մաքսադրույքների բարձրացման օգտին, որպեսզի որքան հնարավոր է շատ ձայներ *զնեն* իրենց համար կարևոր ճյուղում մաքսադրույքի բարձրացման օգտին:

Առևտրային քաղաքականությունը վաճառվում է՞

Ռոբերտ Բալդվինը և Քրիստոֆեր Մագին փորձեցին պարզել՝ իսկապես առևտրային քաղաքականությունը ԱՄՆ-ում վաճառվում է: Այդ նպատակով հեղինակները ուսումնասիրեցին կոնգրեսականների ստացած ֆինանսական աջակցության և երկու առանցքային առևտրային պայմանագրերի վավերացման ժամանակ նրանց քվեարկության միջև կապը: Դրանք 1993թ-ին Հյուսիս-Ամերիկյան ազատ առևտրի գոտու և 1994թ-ին Ուրուգվայի ռաունդի պայմանագրերն էին: Ֆինանսական աջակցություն ցուցաբերողներն էին մասնավոր բիզնեսը, որը կողմ էր այդ պայմանագրերին և արհմիությունները, որոնք դեմ էին: Պարզվեց ֆինանսական աջակցությունը զգալի ազդեցություն էր ունեցել քվեարկության արդյունքների վրա: Նշենք, որ վավերացման համար անհրաժեշտ էր 214 ձայն: Հատկանշական է, որ ըստ հետազոտության արդյունքների՝ պայմանագրերը կվավերացվեին նաև այն դեպքում, երբ որևէ ֆինանսական աջակցություն չլիներ:

	Հյուս-Ամերիկյան ազատ առևտրի գոտու պայմանագրին կողմ	Ուրուգվայի ռաունդի պայմանագրերին կողմ
Փաստացի	229	283
Մոդելով կանխատեսված	227	285
Առանց արհմիությունների աջակցության	294	342
Առանց մասնավոր բիզնեսի աջակցության	186	250
Առանց որևէ աջակցության	252	317
Արհմիության աջակցության ազդեցությունը	-67	-57
Մասնավոր բիզնեսի աջակցության ազդեց.	41	35
Աջակցության ընդհանուր ազդեցությունը	-25	-32

Աղբյուր՝ Robert Baldwin, Christopher Magee, *Is trade policy for sale? Congressional voting on recent trade bills*, Public Choice, 105: 79-101, 2000.

Տեղեկացվածություն և քվեարկում

Մինչ այժմ ենթադրել ենք, թե կենտրոնամետ ընտրողը լիովին տեղյակ է, արդյոք առաջարկվող փոփոխության արդյունքում շահում է, թե՛ տուժում և փաստացի մասնակցում է քվեարկությանը: Այս ենթադրությունները միայն մասամբ են ճիշտ:

Որպեսզի ընտրողը պարզի՝ առաջարկվող փոփոխության արդյունքում շահում, թե տուժում է՝ ժամանակ և ռեսուրսներ պետք է վատնի, որ անհրաժեշտ տեղեկատվություն հավաքի և վերլուծի: Ժամանակ և ռեսուրսներ են անհրաժեշտ նաև ընտրությանը մասնակցելու համար, ինչպես ուղղակիորեն՝ հանրաքվեի միջոցով, այնպես էլ անուղղակիորեն՝ օրենսդիր մարմնում պատգամավոր ընտրելու միջոցով: Այս ծախսերը, թեպետ, նշանակալի չեն, բայց առանձին ընտրողի՝ քաղաքական պրոցեսին փաստացի մասնակցությունից ստացած օգուտի համեմատ մեծ են:


Առանձին ընտրողի՝ քաղաքական պրոցեսին փաստացի մասնակցությունից ստացած օգուտը նրա *հավանականությունն է*, որ մասնակցության արդյունքում ընտրության արդյունքը այդ ընտրողի համար կլինի ոչ թե բացասական, այլ՝ դրական: Բայց այդ հավանականությունը գրո է և, հետևաբար, առանձին ընտրողը մասնակցությունից որևէ օգուտ չունի (թեպետ ընտրության արդյունքից կարող է մեծապես օգտվել):

Իսկ, քանի որ, ընտրության արդյունքը հանրային բարիք է, այսինքն՝ դրանից օգտվում են բոլորը՝ անկախ նրանից մասնակցել են ընտրությանը, թե՛ ոչ, ապա առանձին ընտրողի համար ռացիոնալ վարքը քաղաքական պրոցեսի նկատմամբ անտարբերությունն է (առանց մասնակցելու օգուտի ստացումը կոչվում է *free – riding*):

Ռացիոնալ անտարբերության արդյունքում կստացվի ճիշտ նույն արդյունքը, ինչ-որ կենտրոնամետ ընտրության դեպքում, եթե յուրաքանչյուր ընտրողի՝ ընտրությանը չմասնակցելու հավանականությունը նույնն է: Բայց, քանի որ ձևավորվում են շահերի խմբեր, որոնք վերահսկում են իրենց անդամներին՝ նվազեցնելով *free-riding*-ը, ապա մասնակցության հավանականությունները փոխվում են: Նման դեպքերում շահերի խումբը ձեռք է բերում անհամամասնորեն մեծ ազդեցություն քաղաքական պրոցեսի վրա:

Դիտարկենք տարբերակ, երբ ընտրազանգվածի փոքր մասը մեծապես շահում է, իսկ մեծամասնությունը փոքր-ինչ տուժում է, եթե որևէ կոնկրետ միջոցառում իրականացվի: Օրինակ՝ երբ մաքսադրույք է սահմանվում Եվրոպա չինական կոշիկի ներմուծման նկատմամբ, ապա, ինչպես ցույց է տալիս մասնագիտացած ռեսուրսի մոդելը, մաքսադրույքից էապես շահում են Եվրոպայում կոշիկի արտադրությունում մասնագիտացած ռեսուրսները և կոշիկի արտադրությունում օգտագործվող շարժուն ռեսուրսները: Եվրոպայի բոլոր սպառողները, սակայն, տուժում են, քանի որ կոշիկի գինը բարձրանում է: Բայց, քանի որ յուրաքանչյուր սպառողի վնասը առանձին վերցրած նշանակալի է, ապա սպառողները շահերի խումբ չեն ձևավորում:

Գրաֆիկ 3-3:
Հատուկ շահեր



Գրաֆիկ 3-3-ում ընտրազանգվածի մեծամասնությունը՝ 95%-ը վնասվում է մաքսադրույքի սահմանման դեպքում, բայց յուրաքանչյուրի վնասը բավականաչափ փոքր է: Ընտրազանգվածի աննշան մասը՝ 5%-ը, շահում է, բայց յուրաքանչյուրի շահը զգալի է: Ընդ որում, օրինակը բերված է այնպես, որ $0.95 < 0.05$: Այսինքն՝ հասարակությունը զուտ հաշվով վնասվում է: Ըստ կենտրոնամետ ընտրողի մոդելի՝ մաքսադրույք սահմանելու առաջարկը պետք է մերժվի: Բայց փաստացի 5%-ի շահերը կարող են դառնալ գերակայող, եթե նրանք արդյունավետ շահերի խումբ ձևավորեն: Քանի որ մեծամասնությունը՝ 95%-ը, առանձնապես շահագրգռված չէ մասնակցել քաղաքական պրոցեսին, ապա շահերի խումբը կարող է օգտագործել մասսայական լրատվության միջոցները մեծամասնությանը (ապա)տեղեկացնելու նպատակով: Օրինակ՝ Եվրոպական կոշիկ արտադրողները կարող են հասարակությանը (ապա)տեղեկացնել, թե առողջության համար որքան վտանգավոր է չինական կոշիկը:

Շահերի խումբը, հատկապես, հաջողության է հասնում, եթե ֆինանսավորում է ոչ միայն (ապա)տեղեկացումը, այլև ընտրարշավը: Ընտրական պրոցեսին նման մասնակցությունը կոչվում է *rent – seeking*, երբ շահերի խումբը ցանկանում է մաքսադրույքի արդյունքում ստացվելիք օգուտը կիսել քաղաքական որոշում ընդունողի հետ և քաղաքականության վրա ազդելու նպատակով ֆինանսավորում է որոշում ընդունողի ընտրարշավը:


Անորոշություն

Մինչ այժմ ենթադրել ենք, թե քաղաքականության արդյունքը միարժեքորեն կարելի է կանխատեսել: Իսկ ի՞նչ արդյունք ենք ստանում, երբ արդյունը անորոշ է:

Առևտրի ազատականացման դեպքում արտահանող ճյուղերը կընդլայնվեն, ներմուծման հետ մրցող ճյուղերը՝ կկրճատվեն: Ավելին՝ որոշ ճյուղեր, որոնք ներկայումս չեն արտահանում, կսկսեն արտահանել: Արտահանման ճյուղերում մասնագիտացած ռեսուրսները կշահեն, իսկ ներմուծման հետ մրցող ճյուղերում մասնագիտացած ռեսուրսները՝ կտուժեն: Ենթադրենք՝ ռեսուրսները, որոնք մասնագիտացած են ներմուծման հետ մրցող ճյուղերում, չեն կարող միարժեքորեն կանխատեսել՝ արդյոք իրենց ճյուղը կդառնա արտահանող, թե կմնա ներմուծման հետ մրցող:

Ենթադրենք՝ ընտրազանգվածի 40%-ը մասնագիտացած է արտահանող ճյուղերում, իսկ 60%-ը՝ ներմուծման հետ մրցող ճյուղերում (Գրաֆիկ 3-4): Ենթադրենք, նաև $1/3$ հավանականություն կա, որ ներմուծման հետ մրցող ճյուղը կդառնա արտահանող ճյուղ: Ի վերջո ենթադրենք՝ յուրաքանչյուրի շահը կամ վնասը նույնն է՝ Ω :

Գրաֆիկ 3-4:
Անորոշություն



Այսպիսով՝ 40%-ը միարժեքորեն շահում է, շահը կազմում է 0.4Ն: Ներմուծման հետ մրցող ճյուղերում մասնագիտացած ռեսուրսների համար հստակ չէ՝ իրենք կշահեն, թե կտուժեն. հայտնի է միայն, որ առևտրի ազատականացման դեպքում, դրանց 1/3-ը նույնպես կշահի, շահը կազմում է 0.2Ն:

Հետևաբար՝ հասարակության համար առևտրի ազատականացման զուտ շահը կլինի դրական՝ 0.6Ն: Բայց, ըստ կենտրոնամետ ընտրողի մոդելի, առևտուրը չի ազատականացվի՝ քանի որ մեծամասնության համար քաղաքականության արդյունքը անորոշ է և, հետևաբար, մեծամասնությունը կգերադասի ստատուս-քվոյի պահպանումը:

Բ

Բարեկեցության տնտեսագիտություն –
Welfare economics, 4

Հ

Հանրային բարիք – Public good, 6
Հանրային ընտրության տնտեսագիտություն –
Public choice economics, 1

Ն

Նորմատիվ վերլուծություն – Normative analysis, 1

Շ

Շահերի խումբ – Interest group, 6

Պ

Պարետո չափանիշ – Pareto criterion, 4
Պոզիտիվ վերլուծություն – Positive analysis, 1

Փ

Փոխհատուցման չափանիշ – Compensation criterion, 4